

Հանցիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հանքի Հայկական Ժամանակագիր




Zank Armenian Journal

Ը-ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ - DECEMBER 2004

ԹԻԻ-6



*Vic Darchinyan
IBF Flyweight World Champion*

Մեր Խօսքը

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Առաջին Դեմոկրատ Հնչակեան Կուսակցության Աստրալիոյ Վարիչ Մարմինը, Նոր Սերունդ Մշակութային Միությանը ինչպէս նաեւ իր Տիկնաց, Մարգարեան եւ Երիտասարդական կազմերը, «Նոր Սերունդի Չայն» ռատիոժամի եւ «Չանգ» պարբերաբերթի անձնակազմը ջերմօրէն կը շնորհաւորեն համայն հայութեան՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք, Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ կը մաղթեն որ 2005 թուականը ըլլայ նորանոր յաղթանակներու եւ նուաճումներու տարի:

2005թ. հայ ժողովուրդի համար նշանակալից տարի մը պիտի ըլլայ, նկատի ունենալով Մեծ Եղեռնի եւ Անճախ 20-ներու 90 Ամեակը: Անկասկած մեր բոլորին հայրենասիրական զգացումները պիտի վար պահեն մեր նահատակներու յիշատակը: Մենք կը մնանք Ցեղասպանութեան ճանաչման պահանջատիրութեան ուղիով՝ մինչեւ հասնիլ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու հատուցման:

Միայն խաղաղ, ապահով եւ արդար պայմաններու մէջ մեր ժողովուրդին հնարաւորութիւն կը տրուի բարելաւելու երկրի տնտեսական եւ քաղաքական իրավիճակը եւ կայուն խաղաղութիւն ապահովելու մայր հայրենիքէն ներս: Լաւատեսօրէն կը յուսանք, որ Արցախի վրայ երեւոյղ ամպերը շուտով կը փարատուին, եւ առիթ կուտան Արցախի պետութեան եւ ժողովուրդին լուծելու ներքին եւ արտաքին բազում հարցեր եւ տէր կանգնելու իրենց արդար իրաւունքներուն:

Կրկին անգամ կը ողջունենք մեր ստեղծագործ եւ շինարար ժողովուրդը եւ կը մաղթենք ամենայն բարիք:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցության Աստրալիոյ Վարիչ Մարմին

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ

2005 տարին մէկուկէս միլիոն անմեղ հայու կեանքը խլած եւ հայութեան մնացորդացը իր հայրենի բնօրրանէն տնդահանած, հայ ժողովուրդի դէմ գործադրուած 20րդ դարու Առաջին Ցեղասպանութեան 90-ամեակն է:


Աստրալիահայութիւնը, համայն հայութեան հետ կը պատրաստուի ոգեկոչել 1915 թուականի Մեծ Եղեռնի յիշատակը:

Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ հայութեան արդար հատուցումը հրամայական պահանջներ նկատող մեր ժողովուրդին համար, 90-ամեակը առիթ մըն է համախմբուելու եւ միաւորուելու մեր ճիգն ու կարողականութիւնը, նոր թափով եւ նպատակաւագ աշխատանքով յառաջ տանելու համար մեր պայքարը ի խնդիր ճշմարտութեան հաստատման, Ցեղասպանութեան հատուցումին եւ բռնագրուած Արեւմտահայաստանի հողերու վերամիացման:

Արդարեւ, հայ յարանուանութեանց, ազգային կուսակցութիւններուն եւ կազմակերպութիւններուն մասնակցութեամբ որոշ ժամանակէ մը ի վեր կեանքի կոչուած է Միացեալ Յանձնախումբ մը, համազգային տարողութեամբ ոգեկոչելու համար Ցեղասպանութեան 90-ամեակը, ծրագրելու եւ նախաձեռնելու համար լայնածաւալ աշխատանք, ներազգային իմաստով ազգային պատկանելիութեան գիտակցութեան զարթօնքին եւ հայ մարդու պահանջատէր դրսևորման ապահովման, իսկ արտաքին ճակատին վրայ պատմական յիշողութեան արձանագրութեան եւ արդարութեան հաստատման մեր պայքարին նորանոր գորակիցներու ապահովման ի խնդիր:

Միացեալ Յանձնախումբը կը նպատակադրէ իր ծրագրումներուն եւ նախաձեռնութիւններուն մասնակից դարձնել մեր ժողովուրդի բոլոր խաւերն ու հատուածները: Առ այդ, ան իր այդ աշխատանքներուն մասին պարբերաբար տնդեակ պիտի պահէ Աստրալիահայ հասարակութիւնը:

Ոգեկոչման ձեռնարկներն ու աշխատանքները պիտի երկարին ամբողջ տարուան տնտրութեան:



Եկէք Խաղանք Միասին - Let's Play Together
Introducing the New DVD by Taline & Friends
A unique DVD featuring 15 Exciting and New Armenian Songs for Children Ages 1-8.

NEW RELEASE - An amazing new DVD by Taline & Friends featuring 15 new and exciting Armenian songs for children. This highly entertaining and educational program is action packed with songs, dances, educational acts and characters. Children of all ages will enjoy singing and dancing along with Taline & Friends while visiting the park, meeting friendly pets, learning Armenian words and celebrating PISO's Birthday. An ideal Christmas gift for any Armenian child. Running Time: 45 Minutes

FOR AUSTRALIAN CUSTOMERS AVAILABLE FROM:
ARMENSOF COMPUTING - Vatche Demirjian 0412265835 Price:\$30.00
Make this Christmas a special one for your family and friends.

ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱՂԱՆ ԱՐՔԵՊՍ. ՊԱԼԻՕԶԵԱՆԻ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

Ձի տեսար կատողն նորա յարեւելս,
եւ եկար երկիր պագաւնել նմա:
Մատթ. Ա.:2

Միրելի պաւակներ մեր,

Նոր տարուայ սեմին եկք ու Ս. Ծնունդը մեր առաջ է: Շուտով հրաժեշտ կու տանք օրացոյցային տարիին ու կը դիմաւորենք նորը, որ քրիստոնեայ աշխարհին համար իմաստաւորուած է մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան խորհուրդով:

Քրիստոսի ծնունդը լուսաւոր յայտնութիւն մըն է, մեր կեանքին տարիները իմաստաւորելու համար: Մոզեր հեռաւոր արեւելքի մէջ աստղը տեսան ու անով առաջնորդուած եկան նորածին արքային երկրպագելու: Լուսաւոր աստղը նոյն ինքն Քրիստոս է, որ իր ծնունդով մարդոց ներաշխարհը՝ հոգին ու միտքը լուսաւորելու եկաւ, որպէսզի մարդիկ երկնային լոյս տեսնելով եւ ընդունելով, լուսոյ որդիներ դառնան ու իրենց գործերը լուսով առաջնորդեն:

Ու՛ր է որ ծնաւ արքան: Բեթղեհէմի խոնարհ մտւրին մէջ: Հեռաւոր վայրերէն մոզեր ու մօտաւոր վայրերէն հովիւներ Անոր երկրպագելու եկան. իմաստունն ու խոնարհը տեսան, ճանչցան եւ ընդունեցին անոր արքայի հանգամանքը. խաւարի որդիներ՝ Հերովդէս ու իր նմաններ, մերժեցին ընդունիլ արքային, լոյսը խաւարի վերածել փորձելով:

Մեր նախնիք ամբողջովին հաւատացին լուսոյ արքային ու քաղցին անոր ճանապարհէն, միշտ քաղցր լուծը՝ խաչը շալակելով իրենց կեանքի ընթացքին: Մենք եւս մոզերու իմաստութեամբ ու հովիւներու խոնարհութեամբ, ու մանաւանդ մեր նախնեաց հաւատքով գօտեպնդուած առաջնորդուինք Բեթղեհէմ, երկրպագելու լուսոյ արքային, անով մեր կեանքի օրերն ու տարիները լուսաւորելու, իմաստաւորելու եւ սուրբ դարձնելու համար:

Այսօր նոր Հերովդէսներ կան, որոնք բնաջնջել կ'ուզեն մանուկ ու քրիստոնեայ Հայաստանը. մոզերու իմաստութեամբ ու խոհեմութեամբ, պաշտպան կանգնինք մեր հայրենիքին, որը արքայած հող է Միածին հայրենի հողի վրայ էջքով ու մեր նախնեաց նահատակութեան արիւնով:

Աւստրալիոյ, Նոր Զելանդիայի եւ Ծայրագոյն Արեւելքի մեր հայ համայնքները լուսոյ մէջ պահեն բանի ու գործով. մեր հաւատքի տունները, կրթական օճախները, բարեսիրական ու համայնքային կեդրոնները, եկեղեցական, ազգային, ընկերային ու մարզական կեանքը աշխոյժ եւ նպատակաւոր պահենք քրիստոնէական եւ հայկական ոգիով ու գիտակցութեամբ:

Քրիստոսի ծննդեան աւետիսով վերածնուած, բոլորը կը շնորհաւորենք ու կ'ջախտենք ըսելով.

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»

«Օրինեալ է յայտնութիւնն Քրիստոսի» ամէն:

Հայրական սիրով,
Աղօթարար

Աղան Արքեպիս. Պալիօզեան
Առաջնորդ

Ս. Ծնունդ 2005
Միտնի Աւստրալիա



ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅ - 2005 ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ

ՇԱԲԱԹ - 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ՆՈՐ ՏԱՐԻ

Սուրբ Պատարագ 10:30
Հայրապետական Մաղթանք 11:45

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ - 5 ՅՈՒՆՈՒԱՐ

Երեկոյեան Ժամերգութիւն 4:00
Խթման Ս. Պատարագ 5:30

Կը պատարագէ Արժ. Տ. Նորայր Քհնյ. Բաթմանեան

ՀԻՆԳՇԱԲԹԻ - 6 ՅՈՒՆՈՒԱՐ

ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ԅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Առաւօտեան Ժամերգութիւն 8:30
Սուրբ Պատարագ 10:00
Զրօրհնէք 12:00

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ ԿԸ ՄԱՍՈՒՅԱՆԷ ՈՒ ԿԸ ՔԱՐՈՁԷ ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ

ԳԵՐՇ. Տ. ԱՂԱՆ Ս. ԱՐՔԵՊՍ. ՊԱԼԻՕԶԵԱՆ

Ս. Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարուի եկեղեցւոյ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ Դպրոց Դասի կողմէ

ՈՒՐԲԱԹ - 7 ՅՈՒՆՈՒԱՐ

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Գերեզմանօրհնէք գերզմանատան մէջ 8:30էն - 1:30
Ընդհանուր Հոգեհանգիստ Յուշարձանի մօտ 12:30

ՆԱԽ ՄԵՆՔ ԾԱՆՉՆԱՆՔ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ԱՊԱ՝...

Ազգերիական եւ թրքական մամուլի վերլուծութիւնները Հայոց Յեղասպանութեան ճանաչման հիմնախնդիրը Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգէն դուրս դրուելու ուղղութեամբ, ապատեղեկատուութեան հերթական քայլ մը ըլլալով հանդերձ կրնայ եւ ունենալ կասկածելու հիմքեր, յատկապէս էրտողանի «բարի դրացիական յարաբերութիւններու ուղղութեամբ քայլ առնելու եւ գործի ձեռնարկելու պատասխանատուութիւնը կը պատկանի Հայաստանի» յայտարարութենէն եւ Հայաստանի կառավարութեան կողմէ մեծ եղեռնի 90-ամեակը պետական պիւստճէի մէջ չհանրապարտելու իրողութիւններու լուսին տակ:

Հակառակ Հայաստանի իշխանութիւններու հերքումին ու լուսաբանութիւններուն, մարդ կրնայ միայն ապշիլ Հայաստանի արտաքին քաղաքականութեան դրսեւորումներուն ի տես: Նմանօրինակ զաւեշտային տեսարան մը պարզուեցաւ վերջերս Քոչարեանի Փեքին կատարած այցելութեան ընթացքին: Հայկական պատուիրակութիւնը կը յայտարարէր, թէ պաշտօնական Երեւան կը ճանչնար Թայլանդ իբրեւ Չինաստանի անբախտելի մասը, իսկ օրեր ետք Փեքին գորակցութիւն կը յայտնէր Ատրըպէյճանի հողային ամբողջականութեան: Հայաստանի իշխանութիւնները կանտեսեն աշխարհաքաղաքական զարգացումները: Ոմանք կ'ըսեն, թէ Հայաստան այսօր կը հետեւի «ռէպլիկանտիք»-ի: Եթէ այդպէս է, կարելի՞ է այս քաղաքականութեան սիրոյն հրաժարիլ կամ փորձել ամէն գնով համաձայնութիւն գոյացնել Թուրքիոյ հետ, հողային իրաւական այլ պահանջներ չունենալու գնով կամ լուսնելով Յեղասպանութեան ճանաչումը հետապնդող քայլերը:

Ոմանք կրնան դժգոհիլ, բայց ինչո՞ւ հայրենի իշխանութիւններու ներկայացուցիչներէն ոմանց յայտարարութիւնները Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցին մասին պիտոտոսեան տխուր պատկերին տպաւորութիւնը կը ձգէ սփիւռքահայութեան մօտ: Ինչո՞ւ Հայոց Յեղասպանութեան մասին արտասանուած կամ օգտագործուած բառամթերքը կասկածանքի դուռ կը բանայ հայ քաղաքական մտքին մէջ: Հարցումներու տեղի տուող ենթադրութիւնները կու գան ոչ միայն սփիւռքահայութեան տարբեր զանգուածներէ, այլեւ՝ օտար դիւանագիտական շրջանակներէ, Հայկական Հարցին քաջածանօթ օտար պատմաբաններէ: Հայ եւ թուրք յարաբերութիւններու նախապայմանը Հայոց Յեղասպանութեան ճանաչումն է: Յեղասպանութեան ճանաչումը եւ իրաւական հատուցումները ազգային արժանապատուութեան եւ արդարութեան հարց է: Թուրքիա քաջութիւնը պէտք է ունենայ ճանչնալու Յեղասպանութիւնը եւ հատուցելու, ինչպէս Գերմանիա կատարեց Իսրայէլի՝ հրեաներու պարագային: Ժխտել Յեղասպանութիւնը կը նշանակէ խեղաթիւրել պատմութիւնը, ջնջել ճշմարտութիւնը: Եւ վերջապէս մինչեւ ե՞րբ աչք մտմտուքը, Հայաստան երբեւիցէ պաշտօնապէս պիտի պահանջէ՞ Թուրքիոյ կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը իբրեւ Եւրոմիութեան անդամակցութեան նախապայման: Յեղասպանութիւնը չի կրնար երկխօսութեան առանցք դառնալ: Երկխօսութիւնը կը սկսի երբ Թուրքիոյ այժմու իշխանութիւններ կ'ընդունին իրենց նախորդներու գործած ոճիրը: Ապա՝ հատուցման շուրջ կարելի է նստիլ բանակցութիւններու սեղանի շուրջ: Երկխօսութեան հրահրները Թուրքիոյ կողմէ ժամավաճառութեան միջոցներ են պարզապէս՝ ցոյց տալու հանրային կարծիքին, թէ հասկացողութիւն ստեղծելու իրենց քայլերը կը բախին հայերու մերժումին: Հայաստանի մէջ այսօր տիրող մտայնութիւն է, որ սփիւռքահայութիւնն է

Հայոց Յեղասպանութեան պահանջատէրը, ոչ՝ Հայաստանը: Մինչեւ իսկ շրջանառութեան մէջ դրուած է այն տեսակէտը, թէ անցեալը աւելի կենսական է Սփիւռքի համար, քան՝ ապագան: Ոմանց համար մարտավարական առաջին հարցը Հայաստանի համար ժողովուրդի բարեկեցութիւնն է, հետեւաբար եւ անհրաժեշտ է բանալ Թուրքիոյ հետ սահմանը: Սակայն, նման դիրքորոշումի տէր քաղաքական այլեր (որոնց թիւը դժբախտաբար մեծ է) չեն անդրադառնար, թէ վճռողը իրենք չեն. պարզապէս Թուրքիան փակած է Հայաստանի սահմանը եւ ոչ՝ հակառակը: Իսկ տընտեսական կամ կենսամակարդակի բարելավման առնչութեամբ, այստեղ եւս նախատեսութիւնները վիճելի են:

Համազգային կեանքը ողբերգական հունի մէջ է այսօր: Այլեւս չի խօսուիր ձուլումի ու այլասեռումի թափը կասեցնելու մասին, կը խօսուի լոկ գայն դանդաղեցնելու մասին: Ազգային կառույցներ կը գործեն սանձարձակ: Ձուլումը կը քանդէ սերունդ, եկեղեցի, ակումբ. բոլորս դարձած ենք ինքնազուլի դերակատարը ներկայացման մը, որուն անունն է լաբիւրինթոս: Մինչդեռ այսօր առաջնահերթութեամբ անհրաժեշտութիւնը ունինք ազգակերտումի: Ազգային դատ եւ հողային իրաւունքներ հետապնդելու համար մեզի այսօր անհրաժեշտ է որակ: Ազգային, կուսակցական եւ եկեղեցական առօրեային մէջ անհրաժեշտ է լիակատար արմատական բժշկանքներով իշխանութիւնը եւ մաքրութիւնը: Ձերբազատուինք մաշած, կրկնուող գրգվուտներէ, որոնք կ'անդամալուծեն մեր կարողականութիւնը: Թօթափել այն որ անպէտք է եւ ժամանակավրէպ: Ձերբազատուինք խմբակցական, հատուածական խռովքներէ, որոնք այլեւս ամուլ են, մեզի պահենք այն ինչ որ պիտանի է՝ նիւթական ու հոգեկան նշանակութեամբ: Իմաստութեամբ ու թարմութեամբ դիմաւորենք մեր պատմական պարտաւորութիւնները: Հայ կեանքի մէջ այսօր խախտած է անկեղծութիւնը, սպառած է անկեղծութենէն բխող հաւատքը: Խոստովանինք թէ մեր ազգային կեանքէն ներս խորտակուած է մէկը՝ մէկու հանդէպ համարումը, խոցուած է վստահութիւնը: Այսօր Հայաստանի իշխանութիւնները են արտերկրի քաղաքական հոսանքները իրարու հետ կրնա՞ն խօսիլ Հայոց Յեղասպանութեան հարցին եւ առհասարակ այլ համազգային օրակարգերու շուրջ: Ո՛ւր է այն փառաբանուած անկեղծութիւնը հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ, եւ տակաւին Սփիւռքը ներկայացնող հատուածներու միջեւ: Ձուտ անկեղծութիւնը հաւատք կը ստեղծէ, իսկ ճշմարիտ հաւատքը՝ փոխադարձ անկեղծութիւն: Ազգակերտումը, ժողովուրդի պահպանումը անձնագործութիւնն է: Ազգեր կը գոյատեւեն իրենց առաքելութեան հանդէպ հաւատքով ու եռանդով, ազգային տեսլականը պահպանելու վճռակամութեամբ: Հայաստանի քաղաքական այլերէն լսուող յայտարարութիւնները այն տպաւորութիւնները կը ստեղծեն, թէ նախ մենք պէտք է ճանչնանք Յեղասպանութիւնը, ապա՝...

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԼՄԵԱՆ
«ԱՐԱՐԱՏ», ԹԻԻ 47



**Սոցիալ Դեմոկրատ
Հնչակեան Կուսակցութեան**
Աւստրալիոյ Շրջանի
Internet-ի հասցէն է
WWW.HUNCHAK.ORG.AU
E-mail: Office@Hunchak.org.au